

տարին այդ ամենահարուստ նիւթը անցնելուց յետոյ յիշէ, թէ ինչ է բիբը, սասնատեսակը, գաստակը, բազուկը... եթէ ոչ, ուրեմն ինչ հարկ կար այդ ամենը կոխել դասագրքի մէջ. լայնը լինի արգեօք դրա տեղ ընդարձակել կարդալ-գրել-պատմելու յատկացուած առակների և հէքիաթների թիւը. չէ որ ամբողջ դասագրքի մէջ միայն մի «Պառաւն ու այծը» կայ և մը «Ուլկերն ու գայլը», իսկ մնացեալը բոլորովին անպէտք մանկական դասագրքի համար՝ թէ լեզուի և թէ բովանդակութեան լողմից:

Այս մասումն էլ համարեա չը կայ աշակերտների ինքնուրոյն աշխատութեան համար նիւթ. իսկ այս անհրաժեշտ է, որովհետև սովորական, անխուսափելի երևոյթ է ծխական դըպ-բոցներում մի սենեակի մէջ երկու բաժանմունք մէկտեղ լինելը:

ՀԱՅ.

ԳԵ) Յ. Արաբաջեանց. Մայրենի լեզու Ա. տարի. Ալեքսանդրապոլ 1901 թ. 30 կ.

Այս դասագրքի մէջ էլ համարեա ոչինչ չը կայ աշակերտների ինքնուրոյն աշխատանքի համար. միայն ամեն մի դասից յետոյ դնում է 4—5 բառ պարագաներ կամ խառն շարուած տառերով, որ աշակերտները պէտք է լրացնեն իրանք. այս է, սրանից զատ ոչինչ:

Սրա միակ առաւելութիւնը նիկ. Տէր-Ղեռնդեանի դասագրքից այն է որ 5-րդ դասից աստիճանաբար աւելացող քանակութեամբ նախաղասութիւններ են դրուած, որ ի հարկէ հեշտացնում է առանձին բառերի ընթերցանութիւնից յօդուածների անցնելը.

Երկրորդ մասում պատահում են նոյն յօդուածները, ինչ որ ունի Ն. Տէր-Ղեռնդեանի գիրքը, միայն փոփոխութիւններով. Զի կարելի ասել, որ այդ փոփոխութիւնները միշտ յաջող են. որինակ՝ Ն. Տ.-Ղ.-ի «Պառաւն ու այծը» անհամեմատ աւելի գեղցիկ է գրուած: Պ. Արաբաջեանցը իր մօտից աւելացրել է մի քանի յօդուած: Շատ ափսոս որ խնամք տարուած չէ Բ. մասի վրայ, պէտք էր նրան ձորացնել փոքրիկ առակներով և պատմուածքներով, որոնք այնքան շատ են թէ հայ և թէ ոռու գրաւկանութեան մէջ և որոնք աւելի մօտ են մանկական սրտին ու հասկացողութեան, աւելի սիրելի, քան թէ կենդանիների, հանգերի, բոյսերի, տարուայ եղանակների ու ամիսների չոր ու ցամաք ցանկը:

ՀԱՅ.